

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 50/1

27 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Ծովք-Արածանի» ՍՊԸ 26.10.2015 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.08.2015 թ-ի թիվ 0048 որոշման դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Ծովք-Արածանի» ՍՊԸ կողմից ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով (այսուհետ նաև Հանձնաժողով) է ներկայացվել բողոք, որով ընկերությունը խնդրել է վերացնել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.08.2015 թ-ի թիվ 0048 որոշումը:

Այնուհետև «Ծովք-Արածանի» ՍՊԸ տնօրենը, Հանձնաժողովի նախագահին հասցեագրված 27.11.2015 թ-ի դիմումով խնդրել է, որպեսզի ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.08.2015 թ-ի թիվ 0048 որոշման դեմ բերված 26.10.2015 թ-ի բողոքը թողնվի առանց քննության:

Վերոգրյալի վերաբերյալ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն. «Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե՝

...

բ) դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից.»:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ «Ծովք-Արածանի» ՍՊԸ բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«Ծովք-Արածանի» ՍՊԸ 26.10.2015 թ-ի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել Տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**

